

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 9/3

9 մարտի 2016 թ.

Քննարկվեց Ա/Ձ Գոռ Գալստյանի 05.02.2016թ-ի գանգատը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 04.12.2015թ-ի թիվ 1244/09 որոշման դեմ:

Ա/Ձ Գոռ Գալստյանի գանգատում բերված փաստարկները.

1. Բողոքարկվող վարչական ակտով որոշվել է Ա/Ձ Գոռ Գալստյանից գանձել շուրջ 45500 դրամ, որպես բնապահպանական վճար, որից 26200 դրամ բնապահպանական վճարի ապառք, իսկ 19390 դրամ տույժ:

Ա/Ձ Գոռ Գալստյանը գտնում է, որ վարչական ակտը վերոնշյալ մասով ոչ իրավաչափ և անհիմն է, թեկուզ միայն այն փաստարկմամբ, որ նա զբաղվում է ձկնաբուծական գործունեությամբ, որի համար վճարվում է ոչ թե բնապահպանական, այլ՝ բնօգտագործման վճար:

Իսկ որքանով, որ վարչական ակտով դրված չէ բնօգտագործման վճարի վճարման պարտավորություն, այդ իսկ պատճառով էլ իմաստագուրկ կհամարվի այդ կապակցությամբ որևէ հիմնավորման կամ հակափաստարկի ներկայացումը:

2. Նույն կերպ անհասկանալի է նաև վարչական ակտով դրված եկամտային և շրջանառության հարկերի մեծությունները, որքանով որ վարչական ակտում այդ հարկատեսակների մեծությունների թվային չափերի գրառումներից բացի այն հաստատող որևէ փաստական հիմնավորում նշված չէ: Խախտվել են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի, 4-րդ մասի ե) կետի, 57-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները:

3. Բացի այդ, վարչական ակտ կայացրած վարչական մարմնի պաշտոնատար անձը, պարտավոր էր հարուցված վարչական վարույթի մասին տեղյակ պահել Ա/Ձ Գոռ Գալստյանին՝ նախապես ուղարկելով վարույթի փաստական հիմք հանդիսացած փաստաթղթերի պատճենները՝ միաժամանակ իրեն ներգրավելով վարչական վարույթին, ինչը չի արվել, որի պատճառով ևս ընդունված վարչական ակտը համարվում է ոչ իրավաչափ:

Տեղեկացվում է նաև, որ վարչական ակտը կայացրած մարմինը պարտավոր էր 59-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն վարչական ակտի հետ միասին հանձնել /ուղարկել/ նաև այդ ակտի բաղկացուցիչ մաս համարվող փաստաթղթերը, ինչը նույնպես չի արվել, որի պատճառով Ա/Ձ Գոռ Գալստյանը զրկված է հարկային պարտավորությունների մասով հակափաստարկ ներկայացնելու հնարավորությունից:

Ելնելով վերոգրյալից՝ գանգատաբերը խնդրում է հնարավորինս սեղմ ժամկետում իրեն ուղարկել վարչական ակտի ընդունման համար հիմք հանդիսացած փաստական տվյալների /փաստաթղթերի/ պատճենները, բեկանել վարչական ակտը և հանձնարարել այն ընդունած մարմնին վարույթին ներգրավելու միջոցով վերստին քննարկել հարցը և ընդունել նոր վարչական ակտ:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետը, քննարկելով Ա/Ձ Գոռ Գալստյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 03.12.2015թ-ի դրությամբ նրա չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 435.563 դրամ, որից բնապահպանական վճարի ապառք 26.200 դրամ, տույժ 19.390 դրամ, շրջանառության հարկի տույժ 5.733 դրամ, եկամտային հարկի ապառք 216.828 դրամ, տույժ 167.407 դրամ:

Նշված պարտավորություններն առաջացել են բնապահպանական վճարի 2014թ-ի 3-րդ, 4-րդ, 2015թ-ի 3-րդ եռամսյակների հաշվարկներից, եկամտային հարկի 2014թ-ի ապրիլից մինչև 2015թ-ի հոկտեմբեր ամիսների հաշվարկներից, ինչպես նաև դրանք սահմանված ժամկետում չվճարելու հետևանքով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն հաշվարկված տույժերից:

Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 04.12.2015թ-ին ընդունվել է թիվ 1244/09 որոշումը (այսուհետ նաև Որոշում) Ա/Ձ Գոռ Գալստյանից 435.563 դրամ պարտավորության գումար գանձելու մասին:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ Ա/Ձ Գոռ Գալստյանի կողմից իրականացվող գործունեությամբ պայմանավորված նա հանդիսանում է և բնապահպանական, և բնօգտագործման վճար վճարող, իսկ Որոշմամբ գանձման առաջադրված պարտավորություններն առաջացել են իր իսկ կողմից 2014թ-ի 3-րդ, 4-րդ, 2015թ-ի 3-րդ եռամսյակների համար ներկայացված «Իրավաբանական և ֆիզիկական անձանց բնապահպանական և բնօգտագործման վճարների հաշվարկ-հաշվետվություններով»:

Ինչ վերաբերվում է Որոշմամբ եկամտային հարկի գծով գանձման առաջադրված պարտավորություններին, ապա դրանք նույնպես առաջացել են Ա/Ձ Գոռ Գալստյանի կողմից 2014թ-ի ապրիլից մինչև 2015թ-ի հոկտեմբեր ամիսների համար ներկայացված «Եկամտային հարկի և սոցիալական վճարի ամփոփ հաշվարկներով»:

Գանգատում բերված պնդումների վերաբերյալ, որ Ա/Ձ Գոռ Գալստյանը չի ծանուցվել վարչական վարույթի հարուցման մասին, ընկերությանը հնարավորություն չի տրվել արտահայտվելու վարչական վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ, հարկ է նշել հետևյալը.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի համաձայն՝ վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական վարույթը հարուցվում է այն գործողության (գործողությունների) սկսման օրվանից, որը նպատակամղված է վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական ակտի ընդունմանը:

Օրենքի 35-րդ հոդվածի համաձայն՝ վարչական մարմինն իր նախաձեռնությամբ վարչական վարույթ հարուցելիս վարույթի մասնակիցներին կամ նրանց ներկայացուցիչներին պատշաճ ձևով ծանուցում է վարչական վարույթ հարուցելու

մասին, եթե վարչական վարույթի հարուցումից մինչև վարչական ակտն ընդունելու միջև ընկած ժամանակահատվածը երեք օրից ավելի է:

Իր հերթին, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի համաձայն՝ հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում հարկային մարմինը կամ տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս:

Քննարկվող դեպքում հարկ վճարողից ժամանակին չվճարված պարտավորությունների գումարները գանձելու նպատակով հարուցված վարչական վարույթի մասին գանգատաբերին ծանուցելու պարտականություն չի առաջացել, քանի որ Որոշումն ընդունվել է հարկային մարմնում առկա ապացույցների հիման վրա, երբ վարչական վարույթի հարուցումից մինչև վարչական ակտն ընդունելու միջև ընկած ժամանակահատվածը չի գերազանցել երեք օրը:

Ինչ վերաբերվում է գանգատում բերված պահանջին՝ Որոշումը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստաթղթերի պատճենները տրամադրելու վերաբերյալ, ապա հարկ է նշել, որ նշված պահանջը հիմնավոր չէ, քանի որ ինչպես վերը նշվել է, Որոշմամբ գանձման առաջադրված գումարներն առաջացել են Ա/Ձ Գոռ Գալստյանի կողմից ներկայացված հաշվարկ-հաշվետվություններում արտացոլված պարտավորությունների, ինչպես նաև դրանք սահմանված ժամկետում չվճարելու հետևանքով հաշվարկված տույժերի հիման վրա:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 04.12.2015թ-ի թիվ 1244/09 որոշումը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ